

նմա, այսինքն վրաս մեծ: Տէր էք այսր փռ, քու հասարակութեան և հոգատար, և 'ի ձեռս ձեր է հասարակութիւն սորա. մանաւանդ թէ՝ և տեսչութիւն համօրէն հայկացեանս գրոհի. զի թէ սորայս ուղղընթաց կատարեսցի, իբր յընթացից արեգակնան համանգամայն և պինս մեր մխիթարութեան լոյս ծագեսցէ: Եւ գիտակ իսկ էք, թէ առաջի եղեալս մեր՝ բարի է հասարակութեանս, առանց որոյ վտանդ գուշակի, վրտանդ աղքատութեան, վտանդ տարագնացութեան բազմաց, վտանդ տաղտկութեան հայկականութեան, վտանդ ցրտութեան աղզանոց, Ասպին. մեղք է ապա ոչ առներդ: Եթէ ընդդիմութիւն ինչ կայցէ, ունիք կարողութիւն բառնալոյ 'ի միջոյ. կամ դոնէ խորհնայիք և քննեցիք թէ ո՞նչ ընդդիմութիւն իցէ այն զրդ շիցէ հար վանել:

Եթէ տէր էք հասարակութեանդ, արժանէ տերանցդ ցուցանել զտէրութիւն ձեր 'ի գործադրութիւն այսր: Կառավար էք քաղաքիս. արժանէ կառավարչացդ յայտնի առնել զկառավարութիւն ձեր յայսպիսի ժանր իրողութեան, Անկավար էք այսր նաւու,

արժանէ ձեզ ուղեարել յայն՝ որ նաւահանց գիտուն է սորա: Գիտուն էք մարմնոյ գեղեցկութեան. արժանէ աղցել 'ի բարեշափութիւն անդամոց զայր սնունդ կենդանական: Սիւնք էք հաստատութեան վայելուշ շնուռած սովաւ միայն կարող էք անկործան պահել զսաւ:

Մի՛ համարիք թէ իրբն մարդիկ և կամ իրը մարդկային հնարիւք ունիցիք հաստատել զսաւ, այլ՝ իրբն փոխանորդք ամենարուեստ ճարտարապետին, և իրբն գործարանք ամենազօր Հոգւոյն. առաջնորդեալք ո՛չ ստեղծականս տկարութեամբ, այլ՝ ամենահարող տեսչութեամբ բոլորեցունց. և խնամարկեալք 'ի պաշտպանողական հովանաւորութենէ Տիրամար սրբոյ Աստուածածնին, և նպաստաւորեալք 'ի բարեխօսութենէ Հօրմերոյ սրբոյ Լուսաւորչի, և մօրս մերոյ սըրբուհոյ Եղիսաբեթի, և ամենայն սրբոց: Առ որ ուղերձ ընծայից զայր իմն գուզնաքենայ և փանաքի հաստուածու բանի՝ 'ի բաղձանաց սրբիս խնկաւորեալ՝ ընդունելութեան սորին փափաքիմ և տարփալիք ըղձանօք սպասեալ մեամ:



ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՆՏՐԻ ՑԱՐԵՒԵԼՈ



(Եաբ տես յ'էջ 119)

ԼԸ

Պատմութիւն և Ակարագրութիւն Գեղարդայ կամ Այրիվանից. — Գիշերային հանդիսին երևոյրը. պար և երգեր. — Աւանդութիւն Քրդաց ներկայութեան վրայ. — Գեղարդայ աղբիւրը:

Ճամանակն է արդ մի քանի խօսք ըսելու գեղարդայ եկեղեցւոյն կամ մանաւանդ վանաց վրայ, որ բոլոր Հայաստանի մէջ հըսակաւոր եղած է, զոն պահուած երկու նըսխարաց համար, մին՝ Վրիստոսի սուրբ Գեղարդը, և միւսը՝ Նոյի տապանին տախտակ մը, որոնք ներկայացէս յէմիսածին կը գրտնուին: Մինչև ցարդ Այրիվանից կը կոշուի նա, անստարակոյն մասամբ իւիք քարածայուի մը մէջ փորուած լինելուն պատճառու: Անոր հիմարկութիւնը, չորրորդ գարու մէջ, Ա.

Գիրիզոր Լուսաւորչի կ'ընծայուի. սակայն բնաւ հակառակ փաստ մը չի կայ այն ենթադրութեան, թէ անիկայ մեհեան մ'եղած ըլլայ, զոր յետոյ փոխեր են յեկեղեցիք քրիստոնէից: Ի՞նչ պատճառաւ Տրգառու, երբ հոնկէ մի քանի մղոն գեռու Գառնոյ մէջ հոյակապ չէնքեր կը կառուցանէր, չի ընտրած այս փառաւոր տեղը, զոն կանգնելու կամ լաւ ևս փորելու համար հայկական դից մեհեաններ. սրբվետն Գեղարդ մասամբ մը ձեռակերտ չներքէ կը բաղկանայ, և մասամբ

ևս քարտաժայորի մէջ փորուած կոփածոյ և մրակտուուր քարերէ:

Այս վանքս, որ Հայաստանի հնագոյններէն մին է, շատ անգամ աւերուած է բարբարոս մարդոց ձեռքով: Կը կարծուի թէ վերջին աւարասութիւնն կովկասու Եղիշիներն ըրած են: Յամին 1840, Ալբարաստայ մէծ երկրաշարժն շատ վնասեց այս շէնքը: Յետոյ անոր պահպանութիւնն յանձնուեցա Սեւանայ վանուց մի քանի արեղաններու: Իսկ հիմայ հայազգի ծերունի եպիկուպոս մը կը պահպանէ զայն, ուր քամամթիւ ուխտաւորներ կը յանախին: Երկրորդական խօրշեր և սենեակներ կարգած շարուած են ներքնագաւթիւ մը և գլխաւոր եկեղեցւոյն յորս կողմը: Այս վերջինն կառուցուած է երկու տասաներորդ դարուն մէջ, և դրսէն միայն այս շէնքս կը տեսնուի: Պարզ է անոր նարատարապետութիւնն, և շնուռած գորչազյն կոփածոյ քարերով: Եկեղեցւոյն կերպնը դրաւած են չորս հակայաձև՝ անգամ կրտիա իսկախներով և արևելեան օնով սիւներ, որոնց վրայ կը բարձրանայ քառակուսի պարէիթ մը զարդարուած խորչ խորչ փորուածներով, ուրոնկ նուրբ ճարտարութեան մ'արդիւնք են, և գրեթէ աննման իւր տեսակին մէջ: արարական և մաւրիտանական ձևերու հին տիպարը կը յիշեցնէ, որոնք յանախ կը տեսնուին թքամաներու և պարսկական որմանորչերու և կամարներու զարդարանաց մէջ: Գմբէթին գագաթը կը գտնուի մէծ լուսամուտ մը, և անոր շուրջ նեղ որմանակեր՝ ուսկից միայն լոյս կ'ընդունի եկեղեցին:

Ուրիշ ութ աղեղներ հանգէնելով նոյն սեանց վրայ, շէնքին մասցած մասը կը բաժնեն ութ կամարներու, որոցմէ ումանք միահարթ են և այլք կարակնածեն, բայց ամէնքն ալ հաւասարապես բարձր և զարգագործեալ նրարուեան և խորչխորշեայ փորուածքով: Ասկայն, բատ արևելեան քմահանոյ ճաշակին, ընաւ միւլթիւն չկայ շէնքին ամբողջութեան մէջ, յորում երկու սեան խարիսխիք կամ այլ զարդարանք իրարու շեն նմանիր, և ուր չափակցութիւնն միայն ստուար գծերու մէջ պահուած է:

Մեր այս նկարազրած շէնքը գեռ առաջին սրբավայրն կամ ժամանառն է եկեղեցւոյ, ուր կը մտցուի գին և արձանագրութեամբ ծածկուած գոնի մը: Ուոն եկեղեցի կոչուած փոքրիկ բայց բարձր շէնք մ'է, որ նոյնպէս գորշախայտ քարերով կառուցուած է, և որոյ որմերը լի են հայկական զրութեամբք: Երկու աւանդատուն ունի, ուր կարելի է երթալ խորանին կից սանդունով մը: Բաց յայս աւանդատներէն կան նաև

կրկին փոքրիկ մատուռներ՝ արևմտեան դրան երկու կողմը: յարկածածուկ և քառակուսի սեան մը ձեւը ունին անոնք, ուր կ'երթըցուի, որմի մէջ ագուցուած վիմաշչէն աստիճաններով: Անսարակոյս այս տեղ կու գային աղօթելու հայ իշխանազն կանայք, երբ կ'այցելին այս հոշակաւոր Ալբիվանաց: Ասոնք են ահա եկեղեցւոյ արտաքին մասունքը: անցնինք այժմ նկարազրելու լերան մէջ փորուած միակուտուր սենեակները:

Կրկին դռնակներ, եկեղեցեաց քարաժայա որմին վրայ բացուած, կը հաղորդեն զայն երկու սենեակաց հետ, որոնք ետևէ ետեւ շինուած են՝ փարիկ եկեղեցւոյ և ժամանակն ձերուու: Անդաստակը լրսաւորուած է ձագարածն զմբեթով մը, որ մէծ սրբարանի կաթողիկէին ոնով կառուցուած է: Այս անդաստակին յետակողմը երկու որմախօրշեր կան՝ մոյթերու վրայ յեցած, որոնց վերնը կը տեսնուիք հետաքրքրական արքաքանական, ուր կ'երկին երկու մանեկաւոր առիւծներ՝ կապուած չուաններով, որոնց ծայրերը այժ մը բանած է բերնին մէջ: Այս խորաքանդակէն դեռ աւելի վար կը տեսնուիք նոյնպէս քանդակուած թեատուրած արծիւ մը, որ մագիլներով բանած է գառնուկ:

Այս միակուտուր քարաշէն սենեակաց մէջ շկայ բան մը՝ որ քրիստոնէական զաղափար զարթաւուց ի մեզ: Այդ վերջնոյն մօտ կայ ուրիշ սենեակ մը, որ ոչ միայն առաջնոց նման արարական ճարտարապետութեամբ գմբէթ մ'ունի, այլ նաև աղրիւր մը՝ որ կաթիլ կաթիլ կը ծորէ: Այս աղրիւրը շատ հաշակաւած է թէ քրիստոնէից և թէ այլակրօնից մէջ, ուստի ուխտաւորդ հազիւ թէ հոս կը հասնին, խանելով այս ամենարոյժ աղրիւր քով, բոլորովին կը ցամքեցնեն աւազանը, ուր կը հոսէ թանձնակին լուրը: Աղրիւր մօտ փորուած է որմախորչ մը, ուր մկրտութիւնք կը կատարուին:

Կայ նաև չորրորդ սենեակ մը ասոր ետելը, ուր պատարագելու խորան մը կը գտնուի:

Վերջապէս, այս եկեղեցին, և կամ մանաւանգ այս եկեղեցեաց շարքը, իւր արևելեան ճարտարապետութեամբն և տարօրինակ յինութեամբ, անտարակոյս Հայաստանի կրօնական հյոսկապ շինուածոց մէջ գեղեցկադոյններէն և հնագոյններէն մին է: Այս շէնքս արտաքսակէս շրջապատող որմաժայոք լի են քանդակներով և զանազան արձանագրութեամբք, և աղօտ կերպով կը յիշեցնեն Հնդկաստանի սուրբերկրեաց մեջնաց եւրոյթը:

Այս սենեկաց շարքին վրայ, զոր ցարդ նկարագրեցինք, կը գտնուի երկրորդ յարկ մ' ալ, ուր կարելի է ենել մազլցով քարաժայուն երկայնութեամբը ։ Դանէ մը և կարծը ժայռի մէջ փորուած նրաշաւարիչ մ' անցնելով, կը մտնէ մարդ խցկան մը մէջ, որ առաջնոց անվ շինուած սիւներու վրայ հաստատուած է : Այս մասուուը, ըստ արձանագրութեան մը, փորուած է յամին 1288 ի յիշատակ հայազդի ընտանեաց մը :

Լեռան այն կողը, որուն վրայ շինուած է գեղարդայ վանքը, ձևացած է տեսակ մը կարծը և գորշապոյն հրարաժային հողաքարէ կամ խատաքարերու շեղլակուտ մը :

Մինչդեռ մենք այս հետաքննական խուզարկութիւնքը կ' ընէինք, չափարք գառնուկ մը մորթեր և խորովեր էին, որովհետեւ մենք ալ կը փափաքէինք գիշերային հան դիսին մասնակցի :

Ճաշը աւարտուին վերջը, եկան հրաւերեցին զմեզ ներկայ գտնուելու գիշերային զուարձութեանց : Վրանին պահպանութիւնը յանձնեցինք իսամյելի, որ մեր նոր չափարներէն մինչ էր, և ապահովագոյն ըլլալու համար, նոյն իսկ դրան սեմին վրայ կը քննանայ, որպէս զի թազմաթիւ քուրդք, մոռացանք և թափառաշրջիկ չկարենան մեր բնակարանին մէջ մտնել :

Տեսարանն դեռ աւելի տարօրինակ է՝ քան ինչ որ էր հասնելու պահուն : Խորանորի ժայռերուն մէջ փորուած քարանձաւք՝ նոյն միջոց յի են բազմութեամբ և լուսաւորուած են գիշերապահ զինուորաց մեծ և բոցափայլ խարուներով, որոնք երևական աստերներ կը տարածեն լեռանց վրայ : Անձրեւ օտիզեր էր ուխտարուները պատապարուելու այն բնակարանաց մէջ :

Վանքի գաւթիւն մէջ, դեռ ևս ուխարք կը խորովին, և գինին կը հօսէ : Ամէն տեղ զուարթութիւն կը սիրէ :

Փանի մը չահակիր չափարք կ' առաջնորդեն մեզ խուռան բազմութեան մէջն մինչև այն տեղը, ուր նոյն վայրինենին կը կատարուէին ամէն տեսակ պարեր . որովհետեւ ոյն ուխտանցացներուն այս պառնաձին յատկութիւնն որ մասնակից կ' ըլլան անոր թէ քրիստոնեայք, և թէ իսանաղանճ բազմութիւն մը թափառաշրջիկ մարդոց, որք հոն կու գան պարզապէս հացիկերութիւն մատցորդքը ժողվելու համար :

Ոստիկանութեան պաշտօնեաք ներկայ են հոն, որպէս զի՞ թէ հարկը պահանջէ՝ խաղաղութիւն հաստատեն այն խառնաղանճ մարդոց մէջ, որոնք պաղափառօք և բարոյիկ շատ աննաման են իրերաց : Բայց ամենայն ինչ

չանդարտութեամբ և կարգաւորեալ կերպով լմցաւ :

Հոս երկսեռ հայ երիտասարդութիւնը աշխաթ և շնորհայց շարժմամբ կը խաղայ լիզկիներու զարը, որուն կ' ընկերանայ շըրջող երածշտաց խումբ մը, որ տօներուն առթիւ եկած է ի գեղարդ : Երկու քայլ անդին, Այսորք՝ ալր և կին երկու կարգ շարուած, թե թեհ անցուցած, միօրինակ պար մը կը խաղան, որ ուրիշ բան չէ բայց եթէ տեսակ մը մարմնոյ երերուն : Պարագլուխը կոկորդալիք երգ մը կը նուագէ, որոյ ժամայանգը ամէնքը միաբերան կը կրկնեն, մերթ մեղմով և մերթ բարձրածայն : Զեմ գիտեր թէ ինչ կը նշանակին այցի երգին բառերը, որք ամենուն համար անշականայի են, բաց ի Նըրէից՝ եթէ պատահմամբ կը գտնուէին այն աեղ . բայց կարծեմ զուարթ բան մը կը նշանակէի, եթէ ուշ գնենք գեղեցիկ և առողջարէմ պարագլուխն միմոռական ձևերուն և խորհըրդաւոր նայուածքին :

Եթոյ, կը մօտենանք Նոր-Պայազիսի Հայոց խմբի մը, որուն պարերգը շատ նման էր Այսորիներու պարերգին . լեզուն միայն կը տարբերէր :

Սակայն ոչ ինչ այնքան զարմանալի երեւանա ինձ որդքան եկեղեցւոյ գիշերային այցելութիւնը, որ անձրւին պատճառաւ, ընդարձակ ննջարան մը դարձեր էր : Տարօրինակ էր մանաւանդ տեսարանը բարձր և միին կամարաց, և եկեղեցւոյ յատակին վրայ տարծուող մարդոց, կանանց և տղայոց, որոնք վերաբրուներու մէջ ամփոփուած՝ կը քննանիցին լուրու քարին վրայ : Ձահերը ձեռուսնին ակնարկ մը կը տակ այդ քնյ տաճարին, որոյ անհեթեթ ճարտարապետութիւնը շատ յարմար էր այն տեսարանին, և խոնկմութեամբ կը յառաջենք՝ ոսքերնիս և ձեռքենին ջամիջախելու համար : Այսկայն դեռ ամէնքը շնն քննանար, որովհետեւ միակ կոտոր քարէց շինուած սենեակներուն մէջ կարգադրուած են ուրախարից սեղաններ, որոնք լուսաւորուած են զետոնի վրայ հաստատուած մոմերով և ջահերով :

Եթառ այս գիշերային ճամբորդութեան, յագնած տղմոտ ցերերու մէջ քալելէ, կը մտնենք վրաններու տակ :

Ափան, փարիկ անկողնոյս բացակայութիւնը այս օրունէ իսկ կը զգամ, և ծանր կը թուի ինձ տարածուելու թաղիքի վրայ, որ արդէն ծծեր է գետնին չափազանց խոնաւութիւնը : Անտարազոյս ախորդելի բան մը չէ այսպէս դողդոլալ քրտէն . բայց վերջապէս կը սկսիմ քննանալ, սրափողի, թըն-

բուկներուն և սրնաց խառնաշփոթ աղմկին մէջ, որ կը շարունակուի մինչեւ երկրորդ օրը: Առաւոտեան ժամը երեքի մօտ՝ չերմաշափը հազի հինգ աստիճան կը ցուցընէ:

20 յուլիս: — Այսօր կիրակի է և հանդէսն կը շարունակուի: Նպրիսպանն առտուածային պաշտամունքը կը կատարէ եւ կեղեցւյ մէջ, ուր խուռն բազմութիւն մ'ուխտաւորաց լեցուեր է:

Տարուան մէջ երկու մեծ ուխտագնացութիւնը կ'ըլլան. մին յուշիս 7ին, ըստ Գրիգորեան տոմարի, իսկ միւսն կը կատարուի մայսիս 7ին:

Ուխտաւորը կու գան բժշկութիւն խընդիրելու իրենց հիւանդութեանց, և կու գան մանաւանդ կանաքը որդենութիւն խընդիրելու Առաջմէջ: Կոյքը և աշացաւ աւնեցողք կը լուան իրենց աշեքրոց վանքին փոքրիկ աղբեր լրով: Տղայ ունենալ կինն՝ գտնի մը կը կասէ մէջըը, զոր օրհնել տուած է յառաջագոյն Գեղարդայ եպիսկոպոսուն: Եթէ իրեն աղօթքն լսելի եղած է, նա պարտական է երեք տարի վերջ վերադառնալ հոնիւր մանկամբն ի միասին, և տղուն հասակին բարձրութեամբ մտն մը վասել, որուն մազերը յետոյ կը կարէ՝ իրը նուէր մը:

Ուխտաւորը ուխտագնացութենէ գառնալու ժամանակ՝ իրենց հետ կը բերեն նաև իրը յիշատակ՝ օրհնեալ հացի միջուկով շենուած միտոններ: Բայ ասկէ, իւրաքանչիւր ընտանիք ոյշաւ ե գառ մը մորթելու այս աօնին օրը, զանձնք կը նուիրագործեն՝ յառաջագոյն օրհնած աղ կերցնելով անոնց:

Քայց ամենէն աւելի հետաքրքրականն այն է՝ որ քրդերն անզամ կու գան ներկայ ըլլալու այս քրիստոնէական տօնիս: Հետեւեալ զրոյցն կը պատմուի այս նկատմար.

Երեք հարիւր տարի առաջ քուրդ մը եկաւ ի Գեղարդ, և գողցաւ եկեղեցւոյ գուռը: Երբ հասաւ նա իւր վրանը, և ուզեց գետին դնել գուռը, անոր ուսին կպած մազ, կարծես խորհրդաւոր զօրութիւն մը զայց բոնիր էր: Խեղճ մարդն աղ ու ձախ դարձաւ, աղաչելու համար իւր մերձակայից որ օգնեն իրեն անկէ ազատելու համար. սակայն ամեն բան անօգուտ եղաւ, նա յուսահատած նորէն ճամբայ ելաւ դէպ ի Գե-

դարդ: եկեղեցւոյ առջև դուռն ինքնիրեն քակուեցաւ: Ըստ առասպելախառն զրոյցին, այս յիշատակաւ է՝ որ քրդերն կը մասնակցին այս ուխտագնացութեան:

Վանքին հին խցիկներն՝ որ գեռ լաւ գրից մէջ կը գտնուին՝ ուխտաւորներով լի են. բայց մի քանի հարուստ Հայեր իրենց ծախովի տներ շինել տուած են, որոց մէջ կը բնակին իրենց ընտանեօք հանդերձ:

Կէսօրուլընէ վերջ կը պատրաստուին խումբ խումբ ճամբայ ելնելու. բայց մեկնելին յառաջ, մարդիկ շատ մը հրացաններ միանգամայն կը պարպեն, որոնք ահազին արձագանք կը հանեն: Եզներն իրուած են սայշըրու. կանայք և մանկունք կը դիզուին ծանրաշրժ կապերուն մէջ, որոնք զանդաղապայլ ճամբայ կ'ելնեն դէպ ի իրենց գիւղերը: Այս և անդ մի քանի գինով մարդիկ նոյնիւն կը ճամտին սայշակներու վրայ, անկարելի վրալապ անսած ձիով ճանապարհուելն: Այս բոլոր բազմութիւնն կը դաւան իրենց տուները, շատ ներդութեամբ, եզանց կանոնաւոր քայլերով, դժուարակիս ճամբաներու վրայէն գլորտըլուերով: Նոքա կը հասնին իրենց տեղերը կարգէ գուրս յոդնած, բայց սուուգիւ գուարնացած իրենց ուխտագնացութեամբ:

Որչափ որ կենդանութիւնն և շարժումն կը պակսին, նոյնքան ևս մենաստան ամայի կերպարանք մը կ'առնու: Գասէիթն, եկեղեցւոյ ներան և մատուռներն ամեն տեսակ աւելակներով լի են, և ամեն կոյմ խառնակինութիւն մը կը տեսնուի:

Դիբաղդարար կը սկսի անձրեն կաթկըթել, և մենք ստիպուած ենք այս հրաշալի եկեղեցւոյ բարձր կամբարաց ներքեւ պատըլպարուիլ, և մեծ կրակ մը վառել միակուռը քարաշէն սենեւակներուն միոյն մէջ, որոնք պատին մէջ ծխաչան խորշ մ'ունին, որ վառարանի տեղ կը ծառայի:

Պարզ իրինքով մը կ'երթանք մինչեւ Գեղարդայ աղբիւրը, Գասնիշայը անցնելով, շատ ատանենելի աշխատութեամբ, ժայռերու ահազին կոյտերու վրայէն՝ որոնք կը խափանեն անոր անկորինը: Աղրիւրն 11 աստիճան լիրինթիւնն ունի, և շրջապատուած է ականթներով, վայրի վարդենիներով եւ գեղեցիկ ընկուզէնիներով:

(Շարայարելի)

